

ՀՈՄԱՆԻՇԱՅԻՆ ԵԱՐՔԵՐԸ ՊԵՐՃ ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆԻ «ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴԸ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ

Շ.Պ.Սաղյան

Հայոց լեզվի և նրա դաս.մեթ. ամբիոն

Պ.Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ» պատմավեպում կան զգալի բովով հոմանիշներ, որոնք նպաստում են երևույթը համակողմանի ներկայացնելուն, միտքը շեշտելուն, կրկնությունից խուսափելուն: Հեղինակը գործածել է հոմանիշների երկու տեսակներն էլ՝ համանիշներ և նույնանիշներ, որոնցից, ինչպես և բոլոր գեղարվեստական երկերում, գերակշռում են համանիշները: Առկա են նաև հեղինակային հոմանիշներ:

Ըստ կազմության կան տարբեր տիպի հոմանշային շարքեր՝ բառային, բառակապակցական և խառը: Ըստ խոսքի մասային պատկանելության գերակշռում են բայական շարքերը, որը բխում է հեղինակի ոճի յուրահատկություններից:

Արձակագիր, դրամատուրգ Պ.Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ» պատմավեպը լույս է տեսել 1977թ.՝ ինքնատիպ գործ դառնալով հայ պատմավիպասանության ասպարեզում: IV դարի անկախատեսելի իրադարձությունները, Արշակ Երկրորդի ողբերգական կյանքը, դինամիզմով օժտված մենախոսություններն ու նրկխոսությունները, մարդու հակասական ու բազմեղանի ներաշխարհը ներկայացնելու համար Զեյթունցյանը գործածել է լեզվառական հարուստ համակարգ, որտեղ իրենց ուրույն տեղն ունեն հոմանիշները:

Հոմանիշները ձևով տարբեր, իմաստով մոտ կամ նույն բառերն են, որոնք հակադրվում են նրբիմաստային ու ոճական կողմով: Ստեղծագործողը սրանք մեծ մասամբ կիրառում է մի շարք նպատակներով՝ երևույթը համակողմանիորեն, ինքնատիպ ներկայացնելու, միտքը շեշտելու, տեքստի ճանաչողական արժեքն ընդգծելու կամ էլ կրկնությունից խուսափելու համար: Լեզվաբանության մեջ հոմանիշների հիմնական տեսակներն են համարվում համանիշները ու նույնանիշները: Բանակային տեսակներից

բնականաբար գերակշռում են համանիշները, որոնք իմաստային, ոճական տարբերությունների շնորհիվ բազմազան դրսևորումներ ունեն և հեղինակի ոճի յուրահատկության անմիջական կրողներից են:

Պ.Զեյթունցյանի գործածած հոմանիշների շարքում մեծ թիվ են կազմում համանիշները, որոնք նա կիրառել է հիմնականում միտքը շեշտելու, նրկայթը համակողմանի, մանրամասն ներկայացնելու համար, օրինակ. «Դաշտն արձակ էր, օդը՝ հրաշալի, ջուրը՝ զուլալ, նրկիրը՝ հանգիստ, խաղաղ...» (121): «Որովհետև գեղեցկությունը թախտավորության հեշտ ճանապարհն էր՝ անարգել, անխոչընդոտ» (199): «Եվ արքան, որ ինքը մառոսապան էր, մահաբերն ու մահատուն..... հանկարծ թվաց միակը, որ կարող էր ազնվորեն պաշտպանել նրան....» (155): Այս վերջին նախադասության մեջ մահաբեր և մահատուն հոմանիշները բնութագրում են արքային նաև որպես առասպալական տեսակի վտանգի աղբյուր լինողի: Աստիճանականության նրանց ունեն կոռչելու-ոչնչանալ, սնոմնի-ծովնի շարքերը. «Եթե հանկարծ վառեր, ու հանկարծ պարզվեր, որ անգամ մի չնչին մանրքուր սխալ էր տեսել, այլ կնրպ պատկերացրել, նա լրիվ կորած էր, լրիվ ոչնչագած» (118): «Չորս կողմից սնոմում են ինձ, ծգմում» (15):

Հետևյալ օրինակներում արքա-թագավոր հոմանիշները գործածված են կրկնությունից խուսափելու նպատակով. «Արշակին թագավոր էր կարգել պարսից արքան» (171): «Այնպես որ այս ոճրագործությունն ի վերջո նրկրի բախտի համար կատարվեց: Արշակավանի ախտով վարակված թագավորի փոխարեն մի առողջ արքա ունենալու նպատակով» (179):

Կերպարների խոսքում գործածված հոմանիշները նաև նպաստում են հույզերի, ապրումների ներկայացմանը, նույն միտքը

տարբեր բառերով տալը հուշում է, որ խոսողը չի կենտրոնացել, բառերի բազմազանության մեջ փորձում է գտնել այն միավորը, կատույցը, որը լավագույն կերպով կենդանացնի իր ներաշխարհը, ապրումները: Օրինակ. «Փա՛ռք աստծո, որ ստիպված չնդավ այս միմոսի հետ հաշտվելու, այս ապաշնորհ ղերասանի. այս ցածրորակ ծաղրածուի. այս...»(161): * «Որովհետև դա ոչ միայն դիրքի, ոչ միայն հարստության, ոչ միայն ուժի, այլև միջոցների տարբերություն է, իմ ննգությունն էլ է քոնից շատ, իմ ստորոթությունն էլ, իմ անագնվությունն էլ...»(232): «-Կամ կյանք, կամ մահ,- հուզված ասաց վասսակը:

- + Ոչ, միայն կյանք, միայն ու միայն կյանք:
 - Ինչ գնով ուզում է լինի՞:
 - Այո, ինչ գնով ուզում է թող լինի:
 - Ստոռասմա՞ն.
նվաստագմա՞ն...»(227) և այլն:
- Լեզվաբանության մեջ տարբերում են նաև *լեզվական* և *խոսքային* ինչպես նաև *անհատական* կամ *հեղինակային* հոմանիշներ:

Լեզվական հոմանիշները, ի տարբերություն այս վերջինների, համընդհանուր ճանաչում են գտել և խոսքից դուրս էլ իրենց կայուն հոմանշային կապերն ունեն: Մրանք մեծ մասամբ հաճախ գործածվող միավորներն են և գեղարվեստական ստեղծագործության մեջ գերիշխող են: Խոսքային հոմանիշները խոսքային համակարգում են ստանում հոմանշային արժեք և մեծ մասամբ փոխաբերական իմաստով են գործածված լինում :

Պ.Զեյթունցյանը գտնել-հայտնաբերել-հայտնագործել լեզվական հոմանիշների հետ գործածել է նոկնել բառը՝ նրան փոխաբերաբար տալով նշված հոմանիշների արտահայտած իմաստը.«Ես քեզ գտա, հայտնաբերեցի, հայտնագործեցի, նոկնեցի քեզ, և դու արդեն ազատում չունես ինձանից»(68):

Նեղինակը նո գայ-թշալ-փոփոն խոսքային հոմանիշները գործածել է որպես դարձվածի բաղադրիչներ և արդունք նոսյ/նո գայ/ նի գայ/նիվն դարձվածին հոմանիշ կառույցներ ստեղծել՝ արյունը թշալ. արյունը փոփոն՝ նշանով լնգուն լինել իմաստն արտահայտող դարձվածների շար-

քը հարստացնելով: Նեղինակը տնքստում նշված խոսքային հոմանիշները գործածել է առանց արդունք բաղադրիչի՝ անկախ նախադասությամբ՝ ևս մի անգամ ընդգծելով այն գործածող կերպարի (Վասակ սպարազեն) հույզը, ներքին խռովը. «Արյունը ե՛ս է գալիս նրանց (Մամվել և Մուշեղ Մամիկոնյաններ – Մ.Ե.) մարմիններում: Թող նո գա, թող թշալ, թող փոփոն»(34): Շաղ տալ հարադրությունը հոմանիշ է դարձել դատարկել, դուռն թափել բառերին՝ տնքստում հոգում ունեցած-չունեցած կապակցության հետ գործածվելով: Այսպիսով հեղինակը ստեղծել է սիտո դատարկել դարձվածին հոմանիշ կառույցներ. «...լսելով ու մասօգնական հայացքը հառնց նրան և ինչ որ ուներ-չուներ իր հոգում դատարկեց, դուռն թափեց, շաղ տվեց նրա առաջ» (117): Նեղինակը անայք բառին հոմանիշ է դարձրել անլուսամուտ-ը՝ հիմք ընդունելով սպք բառի՝ փնդիկ քածին իմաստը. «Ճուլ փողոցներ էին դրանք անայք,անլուսամուտ»(136):

Անհատական կամ հեղինակային հոմանիշները նույնպես խոսքային են և կրում են որևէ ստեղծագործողի անհատականության կնիքը: Վերևում բերված կառույցներից որոշները կարելի է համարել նաև անհատական, որովհետև դրանք կամ նորաստեղծ են² (արյունը թշալ), կամ էլ նոր իմաստ են պարունակում(արյունը փոփոն, երկնել, անայք):

Պ.Զեյթունցյանի գործածած հոմանշային շարքերն ըստ կառուցվածքի ունեն հետևյալ տեսակները՝ 1) բառային, 2) բառակապակցական, 3) խառը³:

1) Հոմանշային շարքը բառային է, եթե նրա անդամներն արտահայտված են մեկ բառով: Սա տարածված ձևն է և Պ. Զեյթունցյանի նշված երկում նույնպես գերակշռող է. «Նա մոռանում էր իր ով լինելը և այդ փոքր ու չնչին առավելություններով հալարտանում: Երբեմն նույնիսկ դիտմամբ որևէ անտրամաբանական քայլ էր անում և ուղղակի ցնձում, որ իր խոշոր և հաղթանակալ սննեկապետը՝ իր սիրելի Դրաստամատը, խճճվել է ու գլուխ չի հանում» (15): «Նա վեր կացավ, անտնոն ու անհառկի թծախնդությամբ մաքրեց ծնկները...»(160) և այլն:

2) Բառակապակցական շարքերում հոմանիշներն արտահայտված են բառակա-

պակցություններով, որոնք մեծ մասամբ դարձվածներ են: Օրինակ, «Մարդը ևս գնում էր իր ցնդակիցներին որոնելու,.... ապա-բարձրու մի կտոր հագի համար, պնդելու իր գոյության իրավունքը, կյանքում առաջին անգամ իր սեփական ուժերով իր տունը հիմնելու...» (121): «Որքան ճիգ ու քանք պիտի թափե՞ր, որքան նրանք պիտի ծախսեն, որպեսզի կանաց-կամաց նրա մեջ սեր արթնացնեն դեպի իշխանությունը...» (268):

Հետևյալ շարքում հոմանիշներ են դարձել երկու ազատ և մեկ կայուն բառակապակցություններ. «Եվ նա... մինչև վերջ հասկացավ, մինչև խորքը կրահե՞ր, մինչև ուռնուծուծը գլխի ռնկավ, թե ինչ երջանիկ էր այն պահը...» (337):

Լառօհն կինտիկնանձ տիկին շարքը կազմվել է շրջասույթից և հարադիր բարդու-թյունից. տեքստում սրանց կիրառությունը զուտ ճանաչողական նշանակություն ունի. «Դարձավ Հայաստանի առաօհն կինը հայոց աշխարհի տիկնանձ տիկինը» (298):

3) Խառը տիպի շարքերում զուգահեռ գործածված են նշված երկու տեսակներն էլ: Օրինակ՝ բառերից և բառակապակցություն-ներից են կազմված հետևյալ շարքե-րը «...չէ՞՝ որ այդ բարձրագույն անուններից բազի կա նաև առան կապ, մոտիկ ազգակություն, տնտեսի նույնություն» (83): «Քանի Հայր Մարդպետն ապրում է, քանի գոյություն ունի, գարնիկի կնոջ վրա աչք տնկողն ու նրա դեմ ոճիր գործողը չի նստի հայոց գահին» (178):

«Հայոց արքայի դաշնակցությունից ավելի ձեզ հետաքրքրում է խորհրդավոր ու գաղտնիքներով լեցուն իմ քաղաքը» (259): Խոսքին առավել արտահայտչականություն են տալիս բառերի և դարձվածների զուգորդումը. «Ու էլ մի փորձիր, մի՛ ճգնիր, կյանքիդ ռոտոս մի՛ ել՛, ճշմարտությունն ինձ բացատրելու համար» (300): «- Եթե խնդրեմ, աղերսեմ, ոտքնորո ռնկեմ...» (427): Այս երկու օրինակներում կա նաև աստիճանավորում:

Բառերի և շրջասույթների միջոցով են կազմվել հետևյալ հոմանշային շարքերը. «Սա է Մեծ Հայքի կաթողիկոսը, ամենայն հայոց հայրապետը, ամենասուրբ հա-լը...» (26): «...այս ինչպե՞ս է լինում, որ անձամբ ինքը՝ առօհն, նկրի առաօհն

դեմքը, ծիրանակիրն ու ծիռանավորը, ամենահզոր հայրը, ուշի ուշով հետևում է Արշակաձանի կառուցմանը, բայց էլի գործը տնդից չի շարժվում...» (246):

Հետևյալ հատվածում կանանոցում առաօհնը (իհնն) - տիկնանձ տիկին - թազուհի շարքը ծառայում է նաև կերպարի տիպականացմանը: Փառանձման Արշակ Երկրորդի հետ գրուցելիս գործածում է առաջին երկու հոմանիշները, որով ցանկա-նում է ընդգծել ոչ միայն իր բարձրատոհմիկ լինելը, այլև իր կանացի առավելությունն արքայի բոլոր կանանց ու հարճերի նկատմամբ. «-Միայն մի պայմանով, արքա՛, - չոր ու գործնական տոնով, առանց ամօթի նշույլի, նրան դիմեց Փառանձմե՛ր: - Եթե են առաօհնը (իհնն) նախանոցում:

- Այսինքն՝ թազուհի՛:

- Եթե ինձ կոչեն տիկնանց տիկին:

- Համաձայն եմ: Թազուհի և տիկնանց տիկին» (194): Այս երկխոսության մեջ թազուհի և տիկնանց տիկին հոմանիշները ձեռք են բերել իմաստային նուրբ տարբերություն. առաջինն ունի արքայի կին, որ բարձր կամիք է սեռված իմաստը, իսկ երկրորդը՝ արքային աատկանող կանանցից առաօհնը՝ ոտտ հո կանացի բուրդ հատկանիշները:

ՊԶնյութանգյանը նշված տիպի հոմա-նըշային շարքերից երկուսը կամ երեքը երբեմն գործածում է նույն նախադասության մեջ. նման դեպքում ակնառու է հեղինակի կողմից երևույթն աստվել համակողմանի ներկայացնելը, օրինակ. «խառնուկանքի ցավի, աղախությունն ու գրապարտանքի շուկներ էին դուռն» (31): «Ուրեմն ի՞նչ, մինչև մտօհն ռույդ, մինչև մահկանազուն կնքը սրբության՝ մարի, ապրի անանձնական կյանքն՝ իրեն նվիրաբերի բուրհներին...» (57): «Իսկ թագավորը պետք է հայացքն անընդհատ աչ ու ձայն թեքի, բռնի փախչողների փեշերից, խնդրի, աղերսի, բաժատոհի, հասկացոցի, սատառնա, վստիցոցի...» (105): Այս վերջին օրինակում հոմանշային երեք շարքերի անկայությունը՝ արտահայտված քայքայով, օժանդակում է գործողության անընդհատականությունը, դժվարությունը ներկայացնելուն:

Նման օրինակները չափավոր են գործածված և չեն ստեղծում հոմանիշներով ծանրաբեռնված, դժվարընկալի տեքստ:

Ինչպես օրինակներից երևում է, հոմանշային շարքերը կապակցված են շաղկապմանով կամ շարահարությամբ: Գերակշռում է վերջին միջոցը, որով կապակցվում են մեծ մասամբ բայերը: Սա նպաստում է հորդահոս հույզների, ապրումների վերհանմանը, ինչպես «Թե տղամարդ ես, հրագին, ծնիք. մոնեհիք այդ միտքը» (22): «Դիտի՞ արքան մի բան ձեռնարկի, թեևուզ յնին, թեևուզ աննշան մի բան որոշի...» (115): «Եվ տես, թե ումից են սկսել, տնեցուց, այրու՜նակցից, որպեսզի դատվի, խոռոսկի, խանձվի արքայի սիրտը» (158) և այլն:

Լեռնակցման բառային միջոցներից գործածված են միավորական և ու շարկապները: Գերակշռում է վերջինը, քանի որ այն ազնվի է օժտված փոքր միավորները կապակցելու դերով և դրանով իսկ կարծես ամբողջացնում ու շեշտում է առարկայի՝ բնութագրությունը տրված հոմանիշների սահմաններում: Այս իսկ պատճառով նշված միջոցներով կապակցված են մեծ մասամբ առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը. «Ու նրա և աշխարհի դիմաց՝ ներք անօգնական ու անպաշտպան էակ» (347): «Իսկ որ դրանք փուլ էին ու սին, վկա այս հսկա գերեզմանատունը...» (495): «Տեսնես ի՞նչ է երագում գետնին պատկած այս թշվառ մարդը, միակը իր խմացած ու ճանաչած բոլոր մարդկանցից, որ անցյալ չունի» (353): «Թող նա էլ ծառայի անձանդո՞վ մարդկանց, թող իմանա մոռոտական և անհետք⁴ ծառայության ամբողջ ահավորությունը» (17) և այլն:

Ինչպես որոշ օրինակներից երևում է, հեղինակը նրբեմն հոմանշային շարքն առանձնացնում է, դարձնում անկախ նախադասություն: Սա ևս օժանդակում է մտքի ընդգծմանը, օրինակ. «Թեև հակառակը պիտի լիներ: Ջառմվոր պիտի, փշրվոր պիտի» (189): «Արքան լիովին հատուցում էր իր պատճառած վնասները: Շռալորոն, առասուձեղներն» (297): «Նույնպիսի նախադասության մեջ Պ. Ջեյթունցյանն առանձնացրել է հոմանիշներից մեկը. «Ես ամուլ եմ արքա՛... Չերը...» (254):

Խոսքի մասային պատկանելության առումով նշված երկուսն զերակշռում են բայով արտահայտված հոմանշային շարքերը, այնուհետև՝ գոյականներով ու ածականներով արտահայտվածները:

Ամփոփում

Պ. Ջեյթունցյանի «Արշակ Երկրորդ» պատմավեպում կան զգալի թվով հոմանիշներ, որոնք նպաստում են երևույթը համակողմանի ներկայացնելուն, միտքը շեշտելուն, կրկնությունից խուսափելուն: Հեղինակը գործածել է հոմանիշների երկու տեսակներն էլ՝ համանիշներ և նայանիշներ, որոնցից, ինչպես և բոլոր գեղարվեստական երկերում, գերակշռում են համանիշները: Առկա են նաև հեղինակային հոմանիշներ:

Резюме

В историческом романе „Аршак II „ П. Зейтунян использовал синонимы для всестороннего, своеобразного представления реальности, раскрытия основной идеи, придания произведению познавательного значения, а также для избегания повтора.

Автор использовал разные виды синонимов: языковые, речевые, индивидуальные и т.д.

Ծանոթագրություն

1. Ա. Սուքիասյանի, Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ում առույնը փրփրոն դարձվածին տրված է մեկ իմաստ՝ զառուսնա:

2. Համեմատված են արդի հայոց լեզվի համապատասխան բառարանների հետ:

3. Վ. Առաքելյանի, Լ. Խաչատրյանի, Ս. Էդյանի հեղինակած «Ժամանակակից հայոց լեզու» (հ. 1, Ե., 1979թ.) աշխատության մեջ համանշային շարքերն ըստ կազմության ունեն հետևյալ տեսակներով՝ բառային, բառային և դարձվածային, դարձվածային: Նպատակահարմար ենք գտել դարձվածային բառի փոխարեն գործածել բառակազմակցական անվանումը, քանի որ նշված տեսակի մեջ ներառված են ոչ միայն դարձվածները, այլև այլ տիպի կապում բառակազմակցություններ, ինչպես նաև որոշ ազատ բառակազմակցություններ: Եվ համապատասխանաբար էլ՝ բառային և դարձվածային անվանումը փոխարինել ենք խառը բառով:

4. Արշակ Երկրորդի ներքին խտրում գործածված այս բառը ժամանակավիշակության օրինակ է, քանի որ վեպում նշված ժամանակաշրջանում այն րեպսեմ էր և չունի այսօր գոյականի վերածված հասք բառի իմաստը: